

կնիքին վրայ, որով կնքուած է եր. 96-ի մէջ յառաջ բերուած հրովարտակը : Այս զինանշաններուն Լեւոնի կողմէ Պարսի մէջ գործածուածէն տարբերութիւնը սա է, որ մէջտեղի երուսաղէմեան հինգ խաչերու փոխարէն՝ Կասախյայի յատուկ աշտարակները գրուած են հոն . իսկ երկու կողմի առիւծները մնացած են նոյնութեամբ : Արդ՝ մեր պատկերին վերի կողմինը կը ներկայացնէ Լեւոնի Քրանսայի մէջ գործածած զինանշանները, ինչ որ տեսանք շիրմին վրայ ալ, իսկ տակինը՝ Սպանիայի մէջ գործածածը : — Հին տոհմանշաններու ուսումնասիրութիւնով պարագայ մասնագէտներու համաձայն՝ Լեւոնի զինանշաններուն մէջ գտնուած առիւծներէն մէկը, որ համակ ոսկեգօծ դաշտի մը մէջ նկարուած է եւ ուսին վրայ կը կրէ ոսկի խաչ մը, կը ներկայացնէ Հայաստանը . իսկ միւս արծաթ եւ կապոյտ երկգաւոր կողմը, առիւծով միասին, որ կը կրէ ոսկի թագ մը, կը ներկայացնէ Կիպրոսի Լուսինեանները :

Մտրագրութիւն Լեւոն Ե-ի
Signature de Léon V.



Կնիք Լեւոն Ե-ի
Sceau de Léon V.

Գալով Լեւոնի կնիքին, ա՛յս ալ երկու տեսակ է. մին շինուած է Մաղրիդի մէջ, իսկ միւսը՝ Պարսի մէջ : Այստեղ դրած պատկերս կը ներկայացնէ Մաղրիդի կնիքը, որ Պարսի կնիքէն կը տարբերի միայն վահանին մէջտեղի պատկերով . հոս, Մաղրիդի մէջ, դրած է Կասախյայի յատուկ աշտարակները, իսկ Պարսի մէջ դրած է Երուսաղէմի յատուկ հինգ խաչերը : Վահանին երկու կողմը մէկ մէկ առիւծ քանդակուած են, որոնք բռնած են թագակիր զրահ մը . թագին մէջէն դուրս կուգան բոցեր, եւ բոցերուն մէջէն՝ թագակիր առիւծի մը գլուխը : Բոլորտիքը՝ շրջանակի մը մէջ գրուած է . S' LEONIS QVINTI REGIS ARMENIE. այսինքն՝ « Կնիք = Sigillum) Լեւոնի հինգերորդի թագաւորին Հայոց » :

Ինչպէս կը հետեւի, այս երկու կնիքներն ալ Կիլիկիայի մէջ չեն գործածուած երբեք, այլ միայն Եւրոպայի մէջ : Արդէն կնիքին ձեւն ալ կը